ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026թ. թիվ 782-Ա

Ա.ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի օգոստոսի 24-ի թիվ 643-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Ավդալյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Ավդալյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մնացած մասը ս/թ նոյեմբերի 19-ից 30-ը ներառյալ՝ 8 աշխատանքային օր:

2. «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

3. Ա.Ավդալյանի արձակուրդում գտնվելու ընթացքում փոխարինող նշանակել «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ֆոնդապահ Սոնա Մաթևոսյանին:

4. Ա.Ավդալյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի դեկտեմբերի 1-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-11 14:37:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր